

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կամար Բողոքանքի. Եկատերինա Բողոքանքի, Գարեգին, Արգար եւ Էմին
ցաւօք արտի յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին՝ առաջինը որդու եւ
միւսները թանգագին եւ անմոռանալի եղբոր.

ԳԼԻԹԻ ԿԵՄՍԵՐԵԱՆ ՏԵՐ-ԴԵԼԻԹԵԱՆՑԻ

Մանր. Յուդարկաւորութիւնը տեղի է ունենալու հինգշաբթի, նոյեմբերի 23-ին, առա-
ւօտեան 11½ ժամին, իր բնակարանին (Կաթողիկոսների փողոց, տուն № 14, խաչատրանի)
դէպի Մէյքոնի Բ. Գէորգի եկեղեցին: Հոգեհանգիստ կատարվում է ամեն օր, երկուշաբթի
ժամին 6-ին:

Ջաւահիր, Տիգրան եւ բժ. Գրիգոր Ծաննանները ցաւօք արտի յայտնում են
առաջինի անմոռանալի որդու, եւ երկրորդների սիրելի եղբոր.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՕՋԱՆԵՍՆԻ

Մանր. Մանր. որ տեղի է ունեցել այս նոյեմբերի 21-ին, խնդրում են ծանօթներին
եւ բարեկամներին հնորէ բերել հինգշաբթի, նոյեմբերի 23-ին, առաւօտեան 10 ժամին
հանգուցեալի յուղարկաւորութեանը, նրա բնակարանին (Գործարարական փողոց, համարներ
«Լիօն») դէպի Ս. Նշան եկեղեցին եւ այնտեղից խօսքովանքի դերեղմանատունը:
Հոգեհանգիստ լինելու է այսօր, չորեքշաբթի, ժամին 6½-ին:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻԹԻԻՆ

Սկզբնական քայլեր.—Ներքին Տեսչութիւն.
Ինչո՞վ բացատրել. Ճաւաղակաւ հեռա-
գրներ. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ. Նամակ Ֆրան-
սիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Գրական դէմքեր.

ՍԿԶԵԱԿԱՆ ԲԱՅԼԵՐ

Կովկասի մահաբաններին մէջ վերջին
ժամանակները նկատվում է մի փոքր շար-
ժում դէպի կրթութիւնը եւ դէպի եւրօ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄԲԵՐ

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՍՏԵՓԱՆԷ VII

Ժամանակը այնպէս էր, որ ուսանող երե-
ւոյն տարրութեան վրա լաւագոյն յայտն դնողը
չէր սխալվել Ինքը. Ստեփանէն էլ, համարա-
րանք նոր թողած մի մարդ էր. ամբողջովին
տոգորված ուսանողական իդէալներով, լաւ ծա-
նօթ այն ամենին, ինչ եղել էր եւ կար հայ
ուսանողութեան մէջ, նա մի ֆանատիկոսա-
կան հաւատ ունէր դէպի բարձրագոյն ուսման
նուիրված երիտասարդները. նա ոչ միայն դո-
ւում, փառաբանում էր այդ նորածին ոյժերը,
այլ եւ պաշտպանում էր նրանց պատիւը, ար-
ժանաւորութիւնը:

Այս պատճառով էլ Ստեփանէն սաստիկ յար-
ձակվեց պ. Սունդուկեանի վրա՝ նրա «Պատա-
բալ» պիէսի առթիւ, որի մէջ պ. Սուն-
դուկեանը անհամարելի գոյներով էր նը-
կարել Ռուսաստանից նոր եկած մի «լուսաւոր-
ված երիտասարդին»:

Ստեփանէն իդէալիստ, հաւատացող մը-
նաց մինչեւ իր կեանքի վերջը. վաթսուական
թւականներին յատուկ մի անթառամ երիտա-
սարդութիւն էր դա, որ չէր ուզում տեսնել
ուսանողի մէջ որ եւ է պակասութիւն, եթէ
լինէր էլ այդ պակասութիւնը: Մենք չենք ու-
զում ասել, թէ միանգամայն արդար էր
Ստեփանէի այդ յարձակումը: Համոզված
ենք, որ Ստեփանէն այդքան մեծ ու բար-
ձր հասկացողութիւն հայ ուսանողութեան
մասին չը տարաւ իր հետ գերեզման.
Համոզված ենք, որ վերջին երկու տաս-
նեակ տարիներում ինքը Ստեփանէն հա-
րիւրաւոր փաստերի առաջնորդութեամբ հա-
սած իր լինի այն եղբայրացիներին, որ պ.
Սունդուկեանի հերոսը, իր ապագայ սերունդ-

պական կարգերը: Գիմնազիաների մէջ
աւելացաւ մահաբանական ուսանողների թի-
ւը, հաստատվել են ուսու-թիւնը պակ-
կոված տարրական դպրոցներ, մահաբա-
կանները յաճախում են թատրոններ եւ
իրանք էլ փորձում են տալու ներկայա-
ցումներ թուրքերէն լեզուով:

Այդ շարժումը շատ միջթարական է եւ
համակրելի: Մահաբանական տարրը սկսում
է գնահատել խաղող կուլտուրական կեան-
քի առաւելութիւնները եւ պատրաստվում
է իր ապագան հիմնել աշխատանքի եւ
մտաւոր առաջադիմութեան վրա: Այդ

ների վերաբերմամբ, անմեղներից անմեղն էր
եւ միթէ Ստեփանէն իրաւունք չուներ ան-
պայման հաւատալու իր ժամանակակից երի-
տասարդներին «Հայկական Աշխարհ» լի է
զանազան տեղերից, մասնաւոր Մօսկվայից ու
Պետերբուրգից ուղարկված նամակներով ու յօ-
դուածներով: Այդ գրուածքների տակ գրած
անուններից մի ամբողջ ցուցակ կարելի է կադ-
միւ: Ո՛ր միայն գրուածք: Շատերը անյայտա-
ցան կեանքի մէջ, կային եւ այսպիսիները, ո-
րոնք համալսարանից դուրս սկսեցին երկրպա-
գել այն կուռքերին, որոնց փչելը Ստեփանէն
իր կողմէն էր համարում: Բայց ամենքը չը
կորան այդպէս:

Ահա 1867 թւին սկսում է գրել Գրիգոր
Արծրունին, որ այդ ժամանակ ուսանող էր
Գերմանիայում եւ գնացել էր Շվեյցարիա՝ իր
առողջութիւնը վերականգնելու համար:

VIII

Թող ներվի մեզ մի քիչ երկար խօսել «Հայ-
կական Աշխարհ» այս աշխատակցի մասին:
Սրանով մենք չենք չեղլի մեր յօդուածի սահ-
մանները: «Հայկական Աշխարհ» աշխատա-
կիցները ոչ մէկը այնքան եռանդուն, երկա-
րաւուն աջակցութիւն չէր ցոյց տուել մասա-
գրին, ինչպէս Արծրունին. 1867 թւից մինչեւ
1871 թւականը նա ոչ միայն անդադար յօ-
դուածներ էր ուղարկում Ստեփանէնին, այլ եւ
կատարում էր արտասահմանան քրօնիկադրի
պաշտօն, տեղեկութիւններ տալով հետաքրքրա-
կան երեւոյթներին մասին, մասնաւոր այն ա-
մենի մասին, ինչ վերաբերում էր հայերին:

Այն ժամանակ, երբ Գրիգոր Արծրունին ար-
դէն հռչակված հրապարակախօս էր, մի քանի
թղթով ու ջնջին հակառակորդներ կարծում էին
նախնայեցիկ նրա փառքը, պատմելով այս ու այն
անկէնդներում թէ իրանք են եղել «Մշակի»
հիմնադիրները, թէ Արծրունին առաջին տա-
րիներում հազար կորածներից մէկը կը դառ-
նար, եթէ չը լինէին իրանք, այդ փոքրիկ պա-
րոնները: Երկարատեւ թեթեւամտութեամբ
կապկապած այդ առակներին հաւատացողը պի-
տի ընդունել, որ երբ Արծրունին 1872 թւա-

շարժման նշաններից մէկն էլ այն մասնակ-
ցութիւնն է, որ նա նկատելի կերպով ա-
նում է արդիւնազորութեան մի քանի
ձիւղերում:

Այդ համակրելի եւ արդիւնաբար շարժ-
ման հետ կից նկատվում է մահաբանական
խտեղիւքներից մէջ մի ձգտում իրէպա-
կանացիներու մահաբանականութիւնը իրեւ
կրօն եւ խալսի վերադարձը ներգործական-
առաջադիմական եւ վերանորոգիչ գեր:
Այդ ձգտումը մենք համարում ենք այն
սխալներից մէկը, որոնք նկատվում են
նահապետական եւ անկիրթ ազգերի մէջ
նրանց առաջադիմական սկզբնական
քայլերում: Մահաբանական խտեղիւքներից
պէտք է իրան բոլորովին հեռու պահել
սքոլաստիկական վիճարանութիւններից եւ
դատողութիւններից: Թող բաւական հա-
մարվի այն, որ մահաբանականութիւնը չէ
ուզում այլ եւ արդեւ դառնալ առաջա-
դիմութեան եւ մահաբանական տարրը աղա-
սութիւն է ստանում յարկ եւրօպական
կուլտուրային: Այնուհետեւ վերանորոգա-
կան եւ կրթական գործը պէտք է վերա-
պահել եւրօպական քաղաքակրթութեան:
Ամեն անգամ, երբ ցանկութիւնն առաջ
կը գայ միայնակ եւ շաղկապել մահաբա-
կանութիւնը եւրօպական փիլիսոփայու-
թեան հետ—կը ծագեն մի շարք թիւրի-
մացութիւններ եւ անպատեհութիւններ,
որոնք առիթ կը դառնան մի շարք այն-
պիսի երեւոյթների, որոնք կը խանգարեն
սկզբած առաջադիմութեան գործը:

Ցանկալով աջողութիւն մեր մահաբա-
կան հարեաններին իրանց քաղաքակրթութե-
ան փորձերում եւ սկզբնական քայլերում,
անկեղծ խորհուրդ ենք տալիս ձեռք վերց-
նել այն բոլորից, ինչ որ ձգտում է խառ-

կանին սկսեց հայերէն լրագիր հրատարակել,
նա այդ ժամանակ մի բոլորովին անծանօթ
մարդ էր, որ չուներ ոչինչ դրական անցեալ,
նոր պիտի սովորէր ոչ միայն հայերէն գրել,
այլ եւ առհասարակ մտքեր յայտնել:

Բայց միայն «Հայկական Աշխարհ» բաւական
է ցոյց տալու համար, որ Գրիգոր Արծրունին
1872-ին սկսնակներից մէկը չէր, որ նրան այդ
ժամանակ ճանաչում էր ընթերցող հասարա-
կութիւնը: Նրա գրուածքների մէջ դեռ 1867-ից
երեւում էր ապագայ «Մշակ» խմբագիրը իր
անողորմ, խիստ կերպով որոշած պահանջներով,
իր ոճով, գաղափարներով: Ստեփանէնի ամսա-
գրում դառնում ենք շատ վկայութիւններ, որոնք
է ցոյց են տալիս թէ հայ հասարակութիւնը ա-
ռանձին ուշադրութեամբ էր վերաբերվում ար-
տասահմանի երիտասարդ ուսանողի գրու-
թիւններին: Նրա խօսքը ազդու էր, սթափեց-
նող, անխնայ քննադատում էր մեր իրականու-
թիւնը եւ ցոյց էր տալիս թէ դեռ որքան շատ
բան է պակասում մեզ:

Մենք, դժբախտաբար, հնարաւորութիւն չու-
նեցք այստեղ քննել առ քալ հետեւելու Գրի-
գոր Արծրունու այն բոլոր յօդուածներին, ո-
րոնք տպվեցին «Հայկական Աշխարհի» մէջ:
Կանեք այդքան, որ մեզանում ծնվում էր
խորաթափանց, հարցեր յարուցանող, այդ հար-
ցերին հրային կերպարանք տուող կորովի
միտքը: «Ռուսաստանում դատարարված մի
հայ երիտասարդ» Ստեփանէնի ամսագրի էջե-
րում շնորհակալութիւն էր ուղարկում արտա-
սահման Գրիգոր Արծրունուն, «որ այսպիսի
հետաքրքիր եւ կենդանի հարցեր է յարուցա-
նում մեր աղքատիկ հասարակական կեանքին
վերաբերված»:

Եւ իրաւ, մեր աղքատութեան մէջ սրբաբա-
հարուստ մտքեր: Արծրունին կուտում էր առիւ-
կան ընտանիքի մահացող աղքատներին դէմ,
ցանկանում էր, որ թիֆլիսում համալսարան
չը բացվի, որպէս զի ընտանիքը չը կարողանայ
ազդել ուսանող երիտասարդութեան վրա, ա-
ռաջարկում էր բաց անել խառն դպրոցներ,
որ աղքատները եւ տղաները միասին սովորէին,

նեղ եւրօպական քաղաքակրթութիւնը
մահաբանական կրօնի մեկնաբանութիւնների
հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԻՆՉՈՎ ԲԱՅԱՏԵՐ

Ռուսաց համակրելի ամսագիրներից մի քա-
նիսը սովորութիւն ունեն տարվայ վերջը տպա-
գրել հաշիւ, որից երեւում է, թէ որ քաղաքում
քանի բաժանորդ են ունեցել իրանք:

Այդ վիճակագրութիւնը ունի մեծ նշանա-
կութիւն, որովհետեւ անաչառ թւերը գալիս
են ցոյց տալու մի հասարակութեան մտաւոր
պահանջների չափը, լուրջ ընթերցանութեամբ
հետաքրքրվելու աստիճանը:

Մեր մէջ ամսագիրները, գոնէ վերջին տասը
տարիների ընթացքում, սովորութիւն չեն ու-
նեցել այդպիսի հաշիւ ներկայացնելու հայ ըն-
թերցողներին, որոնց համար շատ ուսանելի
կը լինէին այդպիսի յայտնութիւններ. նա կա-
րող էր համեմատութիւններ անել, բացատրու-
թիւններ տալ եւ այլն:

Ինչպէս իմացան «Մշակ» ընթերցողները,
իրենց Ստեփանէի «Հայկական Աշխարհ» մե-
զանից 32 տարի առաջ ունէր 166 բաժանորդ:
Անցան երեսուն եւ երկու ձիւ տարիներ, ու-
սումը, գրականութիւնը աւելի եւս տարածվեց
հայ հասարակութեան մէջ. նրա «խտեղիւքն»
դասակարգը ստուարացաւ. մեծացաւ ու հարս-
տացաւ եւ նրա բուրժուազիան: Եւ ինչ ենք
տեսնում հիմա: 12 տարի անդադատ լոյս
տեսնող «Մուրճ», ինչպէս իմանում ենք պ.
Արախանեանից ձեռագիր ցուցակից, ունեցել
է վերջին տարին ընթացմանը 261 բաժանորդ:
Այդ թիւ մէջ հաշուած են թէ նուիրատուները
եւ թէ ապառիկ բաժանորդները: Դա ողբալի

հիմնել թիֆլիսում մատչելի դասախօսութիւն-
ներ, այսինքն ժողովրդական համալսարան:
Առանձնապէս նա պաշտպանում էր հայ կնոջ
դասը եւ իր «Բարոյական արթնութիւն» յօ-
դուածը, որի մէջ ասված է թէ «Մինչեւ որ
կիրն չը մասնակցէ կրթութեան գործին—ժո-
ղովրդը տպէտ կը մնայ եւ առաջադիմութեան
գործը աղողելու չէ», վերջապէս էր այսպիսի
դառն խօսքերով. «Բայց աւելորդ է այսքան
խօսել... Աւելորդ է աւելի բացատրել մտքերը,
որովհետեւ հայերէն գրած յօդուածները բացի
օրագրի խմբագրութիւնից ոչ ոքից չեն կարդ-
վում: Թէեւ հայկական կանանց են վերաբեր-
վում այս տողերը, եւ հաւատարմ եմ, որ ոչ մի
հայ կին երբեք չի կարդայ այս գրուածը...
որովհետեւ հայկական կիրն հայերէն կարդալ
չէ իմանում: Յայտնի է, որ Արծրունու գրչին
տուած էր արտի խորքին դիպելու յատկու-
թիւնը: Յօդուածի այդ կծու վերջաւորութիւ-
նը խօսեցնել տուեց հայ կնոջը. եւ Շուշանիկ
ստորագրութեամբ մէկը գրեց «Հայկական Աշ-
խարհում» թէ «բոլոր կանայք կարող են հնոր-
հակալ լինել պ. Արծրունուն, որովհետեւ նոքա
շատ սակաւ են արժանանում այդպիսի ուշա-
գրութեան», բայց մի եւ նոյն ժամանակ աշ-
խատում էր պաշտպանել հայ կանանց, ասելով,
որ եթէ նրանք հայերէն չեն կարդում, պատ-
ճառն այն է, որ կարդալու բան չեն գտնում
հայերէն լեզուով:

Գնալով, Գրիգոր Արծրունին այնքան հեղի-
նակաւոր էր դառնում գրող հայ երիտասարդ-
ների մէջ, որ նոյն ինքն խմբագիր Ստեփանէն,
խօսելով հայ թատրոնի թշուառ դրութեան մա-
սին, դիմում էր Արծրունուն եւ հարցնում էր
թէ ինչ կասէ նա այդ առիթով: Նա յուսահատ-
ված էր, որովհետեւ, ասում էր, «գրողի ան-
կեղծ խօսքերին ուշք չեն կանխում դարձնել:
Եւ Արծրունին պատասխանում էր. «Եթէ ուշք
չեն դարձնում մեր խօսքերին, սա չէ նշանա-
կում, որ չը պէտք է շարունակենք քննել, խօ-
սել եւ գրել: Թող ուշք չը դարձնեն, մենք
դարձեալ կը շարունակենք գրել, խօսել եւ քննա-
դատել... ով գիտէ, կարելի է ժամանակով ուշք

ցանկի կայսրուհուն, որ Պեկին վերադառնալը խոստովանեցին և:

Պեկին: Հետեւելով գրաւումների ցուցակի քաղաքականութեան փրանսիական եւ գերմանական զինեւորանքները, վաղըրդէն թոյլատուութեամբ, վերջին Պեկինի քաղաքային պատի վրայից այն գեղեցիկ աստղագիտական գործընթացը, որ գրեթէ երկու տարեկան ընթացքով Պեկինի ամենանշանակաւոր եւ տեսնելու արժանի առարկաներ էին: Գործընթացը այնքան գեղեցիկ էր, որ մինչեւ անգամ չինացիները, որոնք վերջին անկարգութիւնների ժամանակ ոչնչացնում էին ամեն ինչ, որ յիշեցնում էր օտարերկրացիներին, ձեռք չը տուին նրանց: Գործընթացի կէտը կը տարվէ Պարիզ, միւսը—Բերլին: Նրանց տանելու վերաբերմամբ բացատրում են, թէ որովհետեւ արքունիքի վերադարձը դէպի Պեկին անհաւանական է եւ Պեկինն այլ եւս մայրաքաղաք չէ, ուստի այսպիսի թանգարան գործընթացը չը պիտի ենթարկվի ոչնչանալու վտանգին:

Պեկին: Վաղըրդէն երկուց եւ յայտնում դէպէ Պեկինի չըջակալը արչաւարմբեր ուղարկելու առիթով, այնուամենայնիւ ենթադրում է, որ արչաւանքները անհրաժեշտ են եւ նրանց հետեւանքները բարերար: Այսպիսի օֆիցերների մեծամասնութիւնը նոյնպէս հաւանութիւն է ապրի արչաւանքներին: Անգլիացիները գրաւել են Երկնքի տաճարը, ամերիկացիները—կայսերական նախնիքների տաճարը, ֆրանսիացիները—արեւելեան դամբարանները: գերմանացիները—արեւմտեան դամբարանները: Գերմանական եւ ֆրանսիական զեպանքները սպասում են պատասխանների իրանց կառավարութիւններից ենթադրված պահանջների վերաբերմամբ:

Տեւեռն: Գերմանական զօրքերը աստիկ նեղում են խիստ եղանակից: Մանկան դէպքերը յաճախ են պատահում: Ձիւնորական իշխանութիւնները անհրաժեշտ չեն համարում հակառակվել հեռագրական գծի վերականգնելուն չինացիների կողմից: Նրանք, ակնհայտ է, վտանգ չեն տեսնում այն բանում, որ այստեղի չինացիների համար ճշտագրած կը լինի անարգել հաղորդակցութիւնը Պեկինի արքունիքին:

ԼՕՆԴՈՆ: Նոր պարլամենտը կը ժողովի այսօր եւ ամենից առաջ ձեռնամուխ կը լինի սպիկերի ընտրութեան: Գաւական ճառի ընթերցումը նշանակված է հինգշաբթի:

Բեռլին: Հաւաքայից յետոյ Կրիզեր մտադիր է այցելել Հոնո:

Բեռլին: Գերմանական սահմանամերձ Գերբեստալ կայարանից, Կրիզեր հեռագրեց վերջեւ կայսրին: Մուտք գործելով գերմանական հողի վրա, չեմ կարող չը յայտնել ձեր կայսերական մեծութեան իմ բարեկամական համակրանքի եւ խորին յարգանքի զգացմունքները:

ՎԱՐՇԱՎԱ: Իշխան Իմերետինսկու յուղարկաբորութիւնը դէպի Պետերբուրգի երկաթուղու կայարանը նշանակված է նոյեմբերի 21-ին:

21 նոյեմբերի

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Լուրերին նայելով վերջին հրահանգների պատճառով, որոնցով պատիրված է Կոնկրին խորհրդակցել անգլիական զեպանքին հետ, Կոնկրին նշանաւոր չափով առաջ դնաց դէպի մի համաձայնութիւն, որ պէտք է փոփոխվի այն քաղաքականութեան հիման վրա, որ ամերիկական կառավարութիւնը բացատրել է պետութիւններին իր զանազան առաջարկութիւնների մէջ: Որովհետեւ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը պետութիւնների կազմից ոչ մի պատրաստականութիւն չը գտաւ բողոքելու պատժողական արչաւանքը չարունակելու դէմ, ուստի նա աշխատեց համոզել պետութիւններին, որ այդ քաղաքականութիւնը անհրաժեշտ է եւ առիթ է տալիս աւելի եւս ձգգեղու չինական իշխանութիւնների վերադարձը դէպի Պեկին, նոյնպէս եւ գործի վերջնական վճիռը: Ենթադրում են, որ Միացեալ-Նահանգների ցուցումները բարեհաճ ընդունելութիւն կը գտնեն արտաքին գործերի մինիստրութիւնների մէջ եւ թէ ցուցումները զսպող ազդեցութիւն կանեն օֆիցիւրների վրա:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Մակ-Կլինթոն յայտարարել մէջ առեւ իւր Կառավարութեան այն քաղաքականութեան մի նմուշը, որ կայանում է նրանում, որ միջազգային վէճերը յանձնվին անաչառ միջնորդ դատարանին, կարելի է համարել այն համաձայնութիւնը, որ կապիկց Ռուսաստանի հետ միջնորդ դատարանի քննութեանը յանձնելու ջրակատուի որոշորութեամբ պարապող ամերիկական նաւերի պահանջը: Բերլինցեան ծովում նրանց բռնելու մասին: Ապա նախագահը չորհրդակցութիւն է յայտնում Ռուսաստանին:

տանին այն բարերար օգնութեան համար, որ ցոյց են տուել արեւելեան—սիբիրական իշխանութիւնները Մանչուրիայից փախչող ամերիկացիներին:

Բեռլին: Նահանգների խորհուրդը ընդունեց Հաւաքայի կոնֆերանսիայի եզրակացութիւնը եւ գաշնագրերը միջազգային վէճերը խաղաղութեամբ լուծելու եւ Ժընեւի գաշնագրերը ծովային պատերազմների վրա տարածելու մասին: նոյնպէս եւ այն դէպքերից, որոնցով արգելվում է օդապարիկներից պայթուցիկ նիւթերի օգտագործումը, գործածել քայքայի ուռմբեր, որոնք խնդրող եւ թուճաւոր դադար են տարածում, նոյնպէս եւ այնպիսի գնդակներ, որոնք ընդլայնվում եւ ձեւափոխվում են մարդու մարմնի մէջ:

Տեւեռն: Լուրեր են պտտում, որ գերմանական չորս բոտանքը գտնվում են Պաօտին-Ֆուրից 35 մղոն դէպի արեւմուտք լուրջ վտանգի մէջ: Ֆրանսիական 8 բոտանքը նոյնքանը 10-ին Պաօտին-Ֆուր ճանապարհ ընկան նրանց օգնութեան, վերջնելով իրանց հետ 5 օրվայ ուստառի պաշարներ: Պաօտին-Ֆուրում հանգստութիւն է տիրում:

Պեկին: Պեկին վերադարձող չինացիների թիւը կրկին աճում է. արեւմտագրութիւնը, ըստ երկուցի, բարեկամական է. զանազան ազգերի զինեւորական դատաւորներ ամեն օր տեղեկութիւններ են ստանում ՎՄԻժ բուռնցիքի վերադարձած անդամների տեղի մասին, եւ միայն նրանց են բռնում, որոնք վերաբերմամբ ապացուցված է, որ նրանք էին չինացի քրիստոնեաներին սպանողները: Ուրբաթ օր Տեւեռն-ձինից Պեկին եկաւ առաջին շոգեկառքը դեպ պետութիւնների պաշարման ժամանակից: Երկաթուղական գիծը չի բացվել ընդհանուր երթեւեկութեան համար մինչեւ գեկտեմբերի 3-ը:

Բեռլին: Վաղըրդէն հաղորդում է Պեկինից, թէ բարձրացնելով գերմանական զօրակը Մին դամբարանների վրա եւ պատժելով մի քանի մեքանայ գիւղեր քրիստոնեաներին սպանելու համար, Գալլի զօրաբաժինը վերադարձաւ այստեղ:

Բեռլին: Մեծ ուղարկութիւն դարձրեց իր վրա այստեղ այն բանը, որ այստեղի պալատական քարոզիչը երէկ, ժամապարտեան ժամանակ, յիշելով Երեւելի մասին, ասեց. «Թող Աստուած Օգնական եւ Փրկիչ լինի նրան եւ նրա ժողովրդին»:

ԼՕՆԴՈՆ: Պարլամենտը այսօր դուռնաբաց: Գեյլը սպիկէր է ընտրված: Վաղը կերպվին համայնքների ժողովի անդամները:

Խաղաղութիւն: ԱՆԷՔՍՆԱԴՐ ԲԱՆԱԶԱՐ Հրատարակիչներ: ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱԶԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւններ

Բժիշկ օր. Ե. ԱԼԻԲԵԳԵԱՆ ԲԱԳԻՐՈՎ

Ընդունում է հիւանդներ Առաւօտեան 9—1 ժ. եւ երեկոյեան 5—7 ժ.

Բարեառնիկայա փող. № 16, տ. Դադաշեւա չվի: Բարյինսկայա լ. № 16, Դ. Դադաշեւա. 9—10

ԲԺԻՇԿ

Բ. ՕԶԵՆԵԱՆ ԲԱԳԻՐՈՎ

Ընդունում է ժամը 10—12 առաւօտեան եւ 5—7 երեկոյեան

Մասնագիտութիւն՝ աչքի հիւանդութիւններ: Հասցէ՝ Բագիրովսկի սկզբ, տուն Բագիրովսկի: Բագ. Բագիրովսկի օկեր, Դ. Բագիրով. 6—10

ՎԱՃԱՆՎՈՒՄ Ե

արտասահմանում եւ Կովկասում յայտնի մասնագէտների եւ ֆիրմաների պատրաստած, շատ տարիներ լաւ բերք տուած, ցէլուխարից

Բժժօժիւք

Կովկասեան չերամպահական կայարանի բանդէրով: Ցանկացողները վաղորդ կարող են դիմել.— Թիֆլիս, Լորիս-Մելիկովսկայա № 11 Գալուստ Գալուստյան. (չ. ո.) 5—5

Բժիշկ Մ. ԱԼԵՏԻՍԵԱՆՑ Սօրլական փողոց, տ. № 17.

ԿԱՇՈՒԻ, ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱՐՈՒԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

Ընդունում է ամենայն օր, ժամը 6—8 երեկոյեան (չ. ո.) 7—10

Լոյս տեսան եւ վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1901 թ.

Մ Ո Ց Ի Ե Պ Ա Տ Ի (Շ Ի ր ա ի)

Օ Ր Ա Յ Ո Յ Ն Ե Ր Ը

Մոյցի օրացոյցը դարձարված է Ներսէս Մ. Կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Բաֆֆիի եւ Յ. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր եւ հետաքրքիր յաւելում՝ ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկական, հարուստ երազանք ու նոր զուարճալի վիճակարան:

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէլներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասուրէկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ: Տարեկան չեղել եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում, 15 գոնով: Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը արպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի:

Գները՝ ծ ո ղ ի ի ը—20 կօպ., պ ա տ ի ի ը—50 կօպ. գումարով գնողներին ինքնաւ է զիջում: Դիմել՝ Ալեքսանդրով. Կարապետ Ամինյան, կամ Alexandropole Karapet Arminian (Caucase): Ցանկացողները թող չտապնեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրներ ճշդութեամբ կատարել: (Կ) 9—12

ՈՒՐԱՆԻԱ
Կ. Յիւսարֆօնի աստղագիտական վէպը
Թարգմ. Հ. Առաքելեանի
Մարվում է. Թիֆլիսում—Կենտրոնական հրատմանություն եւ Գ. Գալստեանի մօտ, Լորիս-Մելիկովսկայա. 11: Բ ա գ ու Մ. Յարութիւնեանի հրատմանություն:
Գինն է՝ 1 ռ. 50 կ. ճանապարհածախով:
1 ռուբլի առանց ճանապարհածախով:
1—10

Թիֆլիսի առաջին մասնաւոր կար ու ձեւի գործնական արուեստագիտական վ. Զ. ՉՈՂ-ԲԱՐԵԱՆԻ ձրի ուսումնարանը տեղափոխեց Մոզնու փողոց, տ. Առաքելեանի, № 13:
Հ. Շ. 1—2

НОВОЕ ФРАНЦУЗСКОЕ ПЕЧЕНИЕ
С. С. ИУ и К.
PETIT BEURRE
МОСКВА
С. С. ИУ и К.

Բ Ա Ղ Ե Ր Ո Ւ Ե Ր Ի Ե
Բ Ր Օ Կ Ա Ր Ե Ի Ը Ն Կ.
յանձնարարում է
„Պ Ե Տ Ր Օ Լ“ (Հեղձող)
մագերը ամբողջելու համար:
(ՍԱՊՈՐ) „Պ Ե Տ Ր Օ Լ“
(20) Մագերի թիւիը ոչնչացնելու համար: 4—10

ԲՈԺՈԺԻ ՅԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՄԵՐՄ
Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ
Պարսկերեան դրոշմաւոր պատրաստված
Հ ս կ ո ղ ու թ ե ա մ ք
Մ Ի Հ Ր Ա Ն Խ Ա Ն Ճ Ե Ա Ն Ի
Առաջին կարգի վրայեղ մանապէս Պրուսիայի Կայսերական Շերամպահական վարժարանէն:
Երկար տարիներ է ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆԶԵԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պ ա յ թ է օ Ր Ե Ա Ն Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Մ Ը ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հումքերէն յատկապէս եւ մասնաւոր ինքնօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած ենք Շերամպահական կայարանն քննութեան համար:
Ամեն անոնք՝ որք կը փափակին գիրքատուղիի գիններով լաւ ապրանք գնել եւ ապանով ըլլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին զիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ եւ Խոջափարուիօք քարավանատարան № 16—17, Ա. Կ. ԱՐՍԷՆ եւ ընկ. գրասենեակը:
(Կ. հ. չ. 5—30

ԱՐՏԱՍՏԱՄԱՆԱՆ ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՅԵԼՈՒԼԵԱՐՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ
Բ Օ Ժ Օ Ժ Ի Ս Ե Ր Մ
Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ
ԽԱԼԻԼ ՍԵՊԱԼԻ
Սրանով պատիւ ունեւ յայտնելու պ.պ. չերամպահներին, որ անցեալ տարի Կովկասում իմ միջոցով տարածած սերմը մեծ աղոթութիւն ունեցաւ, ուստի այս տարի կրկին մի եւ նոյն տեսակի սերմից բերել եւ յանձնել եւ չերամպահական կայարանին քննելու համար, որը շուտով պատրաստ կը լինի: Ցանկացողները կարող են դիմել.—Արմանակիլ բազար, քարավանատարայ Մայսուրաձէ եւ Խոջափարուիօք, պ. Բարեկենդանեանի մօտ: 6—6

ОТКРЫТА ПОДПИСКА НА ИЗДАНИЕ ИМПЕРАТОРСКАГО Вольнаго Экономическаго Общества
НАЧАЛЬНОЕ НАРОДНОЕ ОБРАЗОВАНИЕ ВЪ РОССИИ
подъ редакціей членовъ И. В. Э. Общества Г. А. Фальборка и В. И. Чарнолукаго.
Въ программу изданія, являющагося результатомъ перваго, охватывающаго всю Имперію, изслѣдованія положенія въ Россіи народнаго образованія, входятъ изученіе школъ всѣхъ типовъ, положенія и состава учителей и учащихся въ нихъ, средствъ содержанія, постановки учебно-воспитательной, административной и финансовой стороны народной школы и т. д. Все изданіе заключается въ себя свыше 200 печатныхъ листовъ большаго формата въ 8 томахъ в folio и состоитъ изъ текста, многочисленныхъ диаграммъ и картограммъ, статистическихъ таблицъ по губерніямъ, районамъ, уѣздамъ и городамъ Имперіи.
Цѣна за все изданіе по подпискѣ: 25 руб., въ прочныхъ папкахъ 28 руб.
Допускается разсрочка: при подпискѣ 15 рубл. и при выходѣ третьяго и четвертаго томовъ по 5 рубл. По закрытіи подписки цѣна будетъ повышена.
Первые два тома изданія (LIX+825 стр.) вышли изъ печати и немедленно высылаются подписчикамъ. Цѣна каждаго тома въ отдѣльной продажѣ 6 рублей. Слѣдующій томъ печатается.
Подписка на изданіе принимается: въ С.-Петербургѣ, въ И. В. Э. Обществѣ (Забалканскій пр., д. 33) и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ.
2—3.